



ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՉՋԻՋՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԱՄԵՆԱԳԼԽԱԻՈՐՆ Է

Վերջին շաբաթուայ ընթաց-
քում, թեև արցախեան դեպքերի
կիզակետը շարունակում է մնալ
Շահումեանի շրջանը, դրա կողմին
չի նուազում լարուածութիւնը բուն
Արցախի մարզի տարածքում,
ինչպէս եւ անդացել են ռազմական
ճնշումները Հայաստանի սահմա-
նամերձ շրջաններում:

Մարտունու շրջանի Հաղորտի
գիւղի մօտակայ անտառում Յու-
լիսի 27ին փայտ հաւաքելիս գա-
զանաբար սպանուել՝ քառատուել
ու հրկիզուել է 33ամեայ ուսուցիչ
Վալերի Հայրապետեանը:

Մարտակերտի շրջանում տեղի
ունեցած շրջխորհրդի գործկումի
նիստը՝ ըստ «խորհրդային Ղարա-
բաղ» թերթի Յուլիսի 18ի թուի,
անդրադարձել է շրջանի տնտեսա-
կան ֆալաֆական այն ծանր կացու-
թեանը, որի պայմաններում իրա-
կանացում են գիւղատնտեսական
աշխատանքները: Վառելիքի,
պահեստամասերի բացակայու-
թեան պայմաններում դանդաղօ-
րէն է իրականացում բեր-
բահաւաքը:

Մարտակերտի շրջանի Կիչան
գիւղը այն հանգուցակետն է, որտե-
ղից իրականացում է հաղորդակ-
ցական կապը Շահումեանի հետ:
Գիւղի վրայ անընդհատ տեղում
են ազերիների յարձակումները:
Այստեղ տեղակայուած կարգա-
խումբը չի ապահովում դաշտում
աշխատողների անվտանգութիւնը:
Նկատի առնելով Կիչանի ռազմա-
վարական նշանակութիւնը, ազերի-
ները գործադրում են ամեն միջոց
այն հայաբափելու նպատակով:
Այս պայմաններում եւ տեխնիկա-
կան դժուարութիւնների առկա-
յութեամբ, առանձնապէս կարե-
ւորում է բերբահաւաքը արագօ-
րէն առաջ տանելու խնդիրը: Մար-
տակերտի ընդհանուր վիճակը մը-
նում է լարուած, քանզի առ այսօր
Շուշիի բանտում են գտնուում Յուլի-
սի սկզբին կալանաւորուած 10
մարտակերտցի երիտասարդներ,
որոնց նակատագրի շուրջ տեղեկու-
թիւններ չկան: Շրջանը շարունա-
կում է մնալ արտաքին աշխարհից
տեղեկատուական շրջափակման

մէջ, խափանուած է ռադիոհան-
գոյցը: Աւագակային չղաղարող
յարձակումների պայմաններում, եւ
այնուամենայնիւ, շարունակում է
բերբահաւաքը:

Պէտք է նշել, որ կոմսուտի
Քոնսի եւ Սախարովեան կոնգրէսի
մասնակիցների Արցախից հեռանա-
լուց յետոյ հիմնականում վերականգ-
նուած է տեղեկատուական կապը
մարզի տարածքում:

Տագնապայարոյց է իրավիճակը
նաեւ Ստեփանակերտում: Աղաղա-
կող անօրինականութիւնն ու կամա-
յականութիւնն է տիրապետում ա-
միսներ շարունակ ամեն իմաստով
կարեւոր մի այնպիսի հանգուցա-
կետում, որպիսին Ստեփանակերտի
օդակայանն է: ՕՄՕՆականների
վարքի նորմա են դարձել ծաղ-
րուծանակը, դիմաշարժութիւնը,
բռնաբարութեան փաստերը, թոխչ-
ների եւ ուղեւորների հարցի տնօր-
նումը: Վերջին մի քանի օրերին
այդ թոխչները պարզապէս ան-
հնարին են դարձել: Փոքր-ինչ աշ-
խուծացել է երկարուղային բեռնա-
փոխադրումը դէպի մարզ, եւ մարզից

տարբեր հասցէներով պատուիրա-
տուններին էլեկտրաջահելի, կօշիկի,
հագուստի, զինու, այլ արտադրանք-
ների առաւումը: Շրջկենտրոնից
աւտոմոբիլային կապը շրջանների
հետ գրեթէ կտրուած է հիմնականում
վառելիքի պակասի հետեւանով:

Յուլիսի 17ին Մոսկուայում կա-
յացած մամլոյ ասուլիսում արտա-
սահմանեան անկախ փորձագէտները
տեղեկացրել են, որ ՕՄՕՆական
սպաների հետ խօսակցութիւնները
այն եզրայանգման են բերել, որ
վերջինների մասնագիտական մա-
կարդակը չափազանց ցածր է, նրանք
տարրական պատկերացումներ ունեն
իրաւունքի նորմերից եւ որ ՕՄՕՆա-
կանները հիմնականում Հայաստանի
նախկին բնակիչներ են:

Այս ընթացքում յարձակումների
նոր ալիք է բռնկուել Հայաստանի
հետ սահմանամերձ շրջանների՝
յատկապէս Գորիսի ու նաեւ Կա-
պանի բնակավայրերի վրայ, որի
արդիւնքում սպանուել են հոփիւներ,
պատահական մարդիկ, առեւանգ-
ւել են հօտեր: Ասեմք, որ աւագա-

կային այս գործողութիւններում իր
արժանի դերն է խաղացել նաեւ
խորհրդային յանցագործ բանակը:
Բարեբախտաբար այս անգամ հայ-
կական կողմը ցուցադրել է ազ-
գային բնաւորութիւնը եւ հայկական
Ֆակտորի գոյութիւնը: Արդիւնքում
յետ է բերուած նախկին մի շարք
անասնագողութիւնների արդիւնքը
հակակշռող անասնազխաֆանակ,
ոչնչացուել են ՕՄՕՆականներ եւ
քաւանի վարժուած խուժանը: Ինչ-
պէս վերետում նշուեց, իրադարձու-
թիւնների շրջապտոյտի կենտ-
րոնում յայտնուել էր Շահումե-
եանը: Ռազմական ամենաա-
ռաջաւոր տեխնիկայով զինուած
խորհրդային բանակին թեւ յաջող-
ւել էր հայաբափել Շահումեանի
շրջանի Բուզլուխ, Մանաշիղ,
Էրֆեջ գիւղերը, սակայն նշուած
գիւղերի բնակչութեան մարտունակ
խմբերը քաշուել են անտառներ,
չհաշտուելով պապենական բնա-
կավայրերի կորստի հետ: Թէեւ
Բուզլուխ ու Մանաշիղ գիւղերն
աղղեն լցուած են ՕՄՕՆով, սակայն
քաւանչիները դեռեւս չեն համար-
ձակում մուտք գործել էրֆեջ:

«Հայ գրոհայիններ»-ից պաշտ-
պանուելու համար գիւղերից իւրա-
քանչիւրը շրջապատուած է զօրա-
միաւորումներով, որոնք ունեն
8-10 տանկեր, զրահապատ
տեխնիկա:

Յուլիսի 20ին Վերին Շէն
գիւղի մօտ դեսանտ է իջեցուել՝
գործելու նախկին սցենարով: Բայց
այս անգամ հայերը կարողացել
են արժանի հակահարուած տալ,
ոչնչացնելով մէկ ուղղաթիւ, 1
զրահամեքենայ, զինուորների, ո-
րոնց թիւը խնամքով թաֆցուել
է, եւ բազմաթիւ ՕՄՕՆականների:
Հենց սկզբից զօրքը դիմել է
զանգուածային ահարկու ճնշման,
նայն եւ առաջ ինքնաթիւներից
ոմբակոծելով բնակավայրն ու հա-
յերի պաշտպանուողների կուտակ-

ման վայրերը: Ռազմական չնչին
միջոցներով խորհրդային «Բա-
ջարի» բանակին հակահարուած
տալու եւ գիւղը փրկելու ժամանակ
հայկական կողմը ունեցել է նաեւ
ցաւալի կորուստներ: Բազմաթիւ
վիրաւորները ուղղաթիւներով տե-
ղափոխուել են Հայաստան: Իրա-
կանութիւնն ապացուցում է, որ,
բռնութիւնները դադարելու փոխա-
րէն աւելի լկտի ու դաժան բնոյթ
կը ստանան, եթէ չլինի հայկական
կողմի դիմադրութիւնը:

Ասուածին աւելացնենք, որ ի-
րադարձութիւնների հետագայ
ընթացքի վրայ մեծ ազդեցութիւն
կունենայ զօրքերի առաջիկայ դիր-
ֆորշումը կապուած Հայաստան-
Կրեմլ յարաբերութիւնների զար-
գացման հետ:

Մէկ բան պէտք է անվիճելի
դառնայ, որ հայրենի հողատա-
րածքների չզիջման գաղափարը
ամենազխաւորն է: